

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱՆԱՄ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն


ՄՈԼԻԲԴԵՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԵՂԱՆԱԿ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Կատարող՝ «ԱՐԱՆԱՄ» ՍՊԸ

Տնօրեն՝ Վ.ՂԱԶԱՐՅԱՆ Գյուտի հեղինակ Արտոնագիր №3067

Գրանցված է պետական գրանցամատյանում 01.12.2016թ.



Վ. Ղազարյան

Երևան 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.1 Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ	3
1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	4
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	4
1.3.1 Տեխնիկական լուծումներ	4
1.3.2. Տեխնոլոգիական լուծումներ	4
1.3.3. Օգտագործվող բնառեսուրսները և նյութերը	5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	6
2.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	6
2.2 Կլիմայական պայմանները	7
2.3. Օդային ավազան	12
2.4. Ջրային ռեսուրսներ	12
2.5. Հողածածկ	13
2.6. Կենսաբազմազանություն	13
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	14
3.1. Ռիսկերի գնահատում	14
3.2. Մթնոլորտային օդ	15
3.3. Ջրային ռեսուրսներ	15
3.4. Հողային ռեսուրսներ	15
3.5. Մոնիթորինգի ծրագիր	15
3.6. Աշխատանքի անվտանգություն	15
3.7. Փոխհատուցում	16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	16



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված մոլիբդենի թափոնների մշակման համալիրի տեղադրման կատարողը և հետագայում շահագործող է հանդիսանում «ԱՐԱՆԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

«ԱՐԱՆԱՄ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2001 թվականին: Ընկերության հիմնական գործունեությունը՝ տարբեր ոլորտներում ուսումնասիրությունների իրականացում և խորհրդատվություն:

Ընկերության գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3/4 (Էրեբունի վարչ. շրջան):

2014 թվականից ընկերության մասնագետները ուսումնասիրություններ են իրականացրել մոլիբդենի թափոնների արտադարամասերում, մասնավորապես, մոլիբդենի թափոնների մնացորդների լվացման վնասագերծման հետ կապված:

Կատարած հետազոտությունների արդյունքում 2015 թվականին ընկերության ղեկավարությունը որոշում է կայացրել հիմնել մոլիբդենի թափոնների լվացման վնասագերծման արտադրամաս:

Հաշվի առնելով իր տարածքի հարմարավետությունը համալիրի հիմնական տեղադրման վայր ընտրվել է «ԱՐԱՆԱՄ» ՍՊԸ -ի տարածքը: Տարածքը «ԱՐԱՆԱՄ» ՍՊԸ-ն ձեռք է բերել 2006 թվականին սեփականության իրավունքով:

«Արանամ» ՍՊԸ-ն ձեռք է բերել լիցենզիա քաղաքաշինության նախարարությունից բնագավառում շինարարություն իրականացնելու: Լիցենզիան տրվել է անժամկետ №15087 26 օգոստոս 2011թ. «Արանամ» ՍՊԸ, ք. Երևան, Արինբերդի 3/4:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է «Մոլիբդեն պարունակող թափոնների մշակում ստացիոնար արտադրական տեղադրված արտադրամասում»:

Մոլիբդենից առաջացած թափոնները, մասնավորապես կարող են ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ և վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար: Թափոնները կենսաբանական, ֆիզիկական, քիմիական վտանգ են ներկայացնում նրանց համար, ովքեր մասնակցում են թափոնների գործունեության գործընթացին:

«Արանամ» ՍՊԸ-ն նախատեսում է զնել վտանգավոր հումքը թափոնի տեսքով թափոնների ոչնչացման տեղակայված արտադրատարածք համալիր և դրա միջոցով իրականացնել մաքրման և լվացման այդ եղանակով և նմանատիպ այլ թափոնների վնասագերծում:

1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1. Տեխնիկական լուծումներ

Գործունեության հիմնական նպատակն է մաքրել թափոնից մոլիբդենի մնացորդը և անկանխատեսելի վտանգները և հնարավորին չափով մաքրել ծանր մետաղներից:

Ելնելով այս նախապայմանից որոշում է կայացվել ընտրել ստացիոնար արտադրամաս սեփական արտադրական տարածքում, որի իր հիմնական վայրն է հանդիսանում:

Աշխատանքի առաջին փուլում աշխատանքները կտեղադրվի «Արանամ» ՍՊԸ-ի տարածքում, ուր կընդունվեն մոլիբդենի թափոնների մնացորդները և կիրականացվի դրանց մշակման մաքրման և լվացման վնասազերծումը:

Հետագայում նույնպես հիմնական գործունեությունը կծավալվի ստացիոնար պայմաններում, քանի որ հիմնական աշխատանքները կլինեն տեղում: Մինևույն ժամանակ, այլ վայրերից բավականաչափ մեծ պատվերների դեպքում կիրականացվի մշտական համալիրի տեղափոխում պատվերների վայր, կընտրվի բոլոր նախնական բնապահպանական և անվտանգության պայմաններին համապատասխանող տեղամաս, կտեղադրվի համալիրը և կվնասազերծվեն բոլոր կուտակված թափոնները:

1.3.2. Տեխնոլոգիական լուծումներ

Թափոնների վնասազերծման համար ընտրվել է մանրացման և լվացման եղանակը, որը թույլ է տալիս գործնականում ամբողջությամբ առանձնացնել ոչնչացնել այդ կարգի թափոնները:

Նման պահանջներին լիովին բավարարում է ունեցած հոսքագծերը СМД 126-127 և СМД 500 МИП 180x90 մակնիշի սարքավորումները գործարանային վիճակում ու նորը թափոնների ոչնչացման ստացիոնար համալիրը:

Համալիրի անվան և մակնիշի պայմանական նշաններն են՝ քարջարդիչի СМД 126-127 և СМД 500 МИП 180x90 աղացը և շարժական լվացման սեղանը:

Արտադրող ձեռնարկության անվանումը և հասցեն՝ Ռուսաստանի Դաշնություն, Վոլգադեմմաշ:

Համալիրը կահավորված է հիմնական քարջարդիչներով, ինչը թույլ կտա անվտանգորեն վնասազերծել վնասակար միացությունները:

Համալիրի տեխնիկական բնութագրերը բերված են ստորև.



Աղյուսակ 1.1. Սարքի տեխնիկական բնութագիրը


N	Բնութագրիչի անվանումը	Արժեքը (ցուցանիշը)
1	Բեռնվող թափոնների հաշվարկման գանգվածը, կգ	1օրում/24 ժամ 50T
2	Թափոնների մշակման հաշվարկային արտադրողականությունը, կգ/ժ	400KB
3	Թափոնների խտությունը, կգ/մ ³	1000
4	Մշակման հզորությունը min/max, ԿՎտ	250/400
5	Սպառվող հզորությունը, ԿՎտ, ոչ ավել	400 KB
6	Ցանցի լարումը, Վ	320

1.3.3. Օգտագործվող բնատեսությունները և նյութերը

Համալիրի հիմնական հումք են ծառայելու մաքուր երկաթ գործարանի վաղ. թափված թափոնները, որը առաջացել է մոլիբդենի թափոններից: Համալիրի շահագործման ընթացքում օգտագործվելու է դիզելային վառելիք և էլեկտրաէներգիա: Ջուր, այլ նյութեր չեն օգտագործվելու:

Անձնակազմի կենցաղային և խմելու կարիքների համար կօգտագործվի խմելու որակի ջուր:

Ըստ նախնական պլանավորման, համալիրը կսպասարկեն 22 աշխատող, որոնց կենցաղային պահանջների համար ունենք մշտական օրական 250լ ջուր:



2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Երևանի ՋԷԿ-ը գտնվում է քաղաքի հարավային մասում, արդյունաբերական շրջանում: Մոտակա բնակելի «Էրեբունի» և «Նորագավիթ» թաղամասերը գտնվում են ՋԷԿ-ից մոտ 2500–3000մ հեռավորության վրա:

Տեղանքի ռելիեֆը հանգիստ է: Տեղանքի ռելիեֆի թեքությունը արևելքից արևմուտք կազմում է 10մ:

Տեղանքի նիշը ծովի մակերևույթից 927մ է:

Հրազդան գետից տեղանքի հեռավորությունը 18կմ է:

Սեյսմակայունությունը - 8-9 բալ:

Պատմաճարտարապետական «Էրեբունի» թանգարանը գտնվում է տեղանքից 5կմ հեռավորության վրա:

Բարձրությունների տարբերությունները 1կմ հեռավորության վրա չեն գերազանցում 50մ, այդ պատճառով ռելիեֆի գործակիցը ընդունված է 1:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Գեոմորֆոլոգիա

Ներկայացվող տեղանքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ որոշակի թեքությամբ ռելիեֆային բնույթ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից այրովիալ-պրոլյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կակավազով ամուր կազմության, փթած բույսերի մնացորդներով և արմատներով:

2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արմատները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով:

4. Երկրաբանական տարածքում ներկայացված են հրաբխային ապարներով:

5. Երկրաբանական տարածքում ներկայացված են հրաբխային ապարներով:

6. Երկրաբանական տարածքում ներկայացված են հրաբխային ապարներով:



կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սելամիկ ազդեցության ժամանակ, քանի որ ստորգետնյա ջրերը, տեղադրված են մակերեսից 5մ-ից ցածր: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային զրունտներում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայությամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

Ըստ նախկին տարիներին մերձակա Այնթապ գյուղի տարածքում կատարված հիդրոերկրաբանական հետազոտությունների տվյալների զրունտային ջրերը տարածքում տեղադրված են 5մ-ից խորը հորիզոններում:

ՀՀՇՆ 11-6.02-2006 Սելամակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր նորմատիվային փաստաթղթում ներկայացված սելամիկ գոտեվորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սելամիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

2.2 Կլիմայական պայմանները

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30 °0, բացարձակ մաքսիմումը հասնում է +42°C: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» ՇՀՊ II-7.01-96 տվյալների համաձայն:



Օդի միջին ջերմաստիճանը, °C

Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների												Միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-3.4	-0.9	5.3	12.4	17.4	21.6	25.5	25.2	20.5	13.5	6.5	-0.2	12.0

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Միջինն ըստ ամիսների												Միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
78	73	63	55	55	49	45	44	49	60	72	78	60

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 3-ում: Էրեբունի կայանը գտնվում է 888 մ ծ.մ. բարձրության վրա: Կլիման բնութագրվում է տեղումների ցածր քանակով: Տեղումների միջին տարեկան նորման չի գերազանցում 316 մմ: Շրջակայքում գոլորշիացման էներգետիկական հնարավորությունները զգալիորեն գերազանցում են տեղումների քանակը, այդ պատճառով կլիման չոր է:

Չյան ծածկույթի առավելագույն դեկադային բարձրությունը կազմում է 58 սմ, ճնշումը-70 կգ/մ²: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 60 սմ: Չյան ծածկույթով օրերի միջին քանակը կազմում է 48: Հաստատուն ծածկույթը գոյություն ունի մեն տարի:



Տեղումների բնութագիրը


Տեղումների քանակ _____ միջին _____, մմ մաքսիմալ օրական												Միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
<u>24</u>	<u>26</u>	<u>32</u>	<u>43</u>	<u>52</u>	<u>27</u>	<u>13</u>	<u>10</u>	<u>13</u>	<u>26</u>	<u>28</u>	<u>22</u>	<u>316</u>
21	23	34	29	42	31	29	26	51	35	36	28	51

Քամու նվազագույն միջին արագությունը հուլիս ամսին, որի կրկնվողությունը հասնում է 16 տոկոս, կազմում է 7.2 մ/վրկ: Քամու բացարձակ առավելագույն արագությունը 20 տարի մեկ անգամ հասնում է 24 մ/վրկ: Նորմատիվ հողմաբեռնվածքը կազմում է 45 կգ/մ²:

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 4-ում:

Քամու բնութագիրը

ամիս	<u>Քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անդորրի, %</u> քամու միջին արագությունը, մ/վրկ								
	Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	ՀՎ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անդորր
I	<u>3</u> 2.0	<u>10</u> 2.1	<u>13</u> 2.2	<u>16</u> 2.8	<u>20</u> 2.6	<u>26</u> 2.3	<u>9</u> 2.7	<u>3</u> 3.4	78
IV	<u>7</u> 3.1	<u>14</u> 2.9	<u>8</u> 2.4	<u>18</u> 3.0	<u>18</u> 3.5	<u>16</u> 3.0	<u>13</u> 4.1	<u>6</u> 3.4	50
VII	<u>17</u> 5.5	<u>31</u> 5.9	<u>3</u> 2.2	<u>9</u> 2.4	<u>16</u> 2.1	<u>13</u> 2.5	<u>7</u> 2.7	<u>4</u> 4.6	40
X	<u>5</u> 2.7	<u>18</u> 2.3	<u>10</u> 1.8	<u>11</u> 2.5	<u>19</u> 2.2	<u>22</u> 2.2	<u>10</u> 2.8	<u>5</u> 3.7	70



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ և ԱՆՎՈՐՈՒՄԻ ԵՐԱՍՏՈՒՄԻ ԵՐԱՄԱՍԿՐ ԲԵՐՎԱԾ ԷՆ 5-7 ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐՈՒՄ:

Արեգակնային ճառագայթում (Երևան)

Գումարային ճառագայթում (ուղիղ+ցրված), որը մուտք է գործում հորիզոնական մակերևույթ անամպ երկնքի դեպքում, ՄՋ/մ ²												Միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
264	423	586	804	1043	1182	1068	1047	842	620	339	214	700


Արեգակնային փայլի տևողությունը (Երևան «Ագրո»)

Տևողությունն ըստ ամիսների, ժամ												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
89	423	118	169	283	334	359	352	300	246	144	90	2696

Ամպամած օրերի քանակը (Երևան «Ագրո»)

Ըստ ամիսների, ժամ												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
10	6	4	2	0.2	0.1	0	0.1	0.3	1	4	11	39

Արեգակնային կլիմայական պարամետրերը բերված են 8-9 աղյուսակներում:



Կլիմայական բնութագրիչը տարվա ցուրտ ժամանակահատվածում, Էրևան-Էրեբունի


Աղյուսակ 8.

ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ հիեցրյալի		ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ օրվա		ամենա ցուրտ օրվա	
ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված
0.98	0.92	0.98	0.92	միջին ամենացուրտ ժամանակահատվածում	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական ամառային	Տևողությունը (օր) միջին ջերմաստիճանը (°C) ժամանակահատվածում, հրը միջին օրական ջերմաստիճանը ոչ ավելի քան	0	8	10	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Մթնոլորտային տեղումներ և գրունտի սառչման խորությունը	Մթնոլորտային տեղումներ	Մթնոլորտային տեղումներ	Մթնոլորտային տեղումներ	Մթնոլորտային տեղումներ
-21	-19	-19	-17	-3.6	-27	8.3	ՉԾ	-2.4	1.0	1.8	78	68	132	60	24	24	2.6

Կլիմայական պարամետրերը տարվա տարբեր ժամանակահատվածում, Էրևան Էրեբունի

Աղյուսակ 9.

Օդի ջերմաստիճան, °C		Օդի ջերմաստիճան, °C		Օդի ջերմաստիճան, °C		Օդի ջերմաստիճան, °C		Օդի ջերմաստիճան, °C		Օդի ջերմաստիճան, °C		Օդի ջերմաստիճան, °C		Օդի ջերմաստիճան, °C		Օդի ջերմաստիճան, °C			
ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված	ժամանակահատված		
բացարձակ առավելագույնը	ամենատաք ամսվա միջին առավելագույնը	ամենատաք ամսվա միջին օրական առավելագույնը	Մեծագույն ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Մթնոլորտային տեղումներ, մմ	Մթնոլորտային տեղումների քանակը ապրիլ-հունիսի ամիսներին	Օրական մաքուր մաքուր	Վերականգնող ռադիո-օդաչու ամիսներին	հունիսի միջին արագությունները եկագույնները, ըստ ջամբերի, մ/վրկ	42	33	15.6	45	28	154	51	24	2.1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԵՇԱԿԱՆ ԿՐԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԹՅԱՆ ԿՐԻՍՏԱԿԱՆ ԻՍՏԻՏՄԱՆ ԳՐԱԿԱՆԱՏՎԱԾ ԿԵՆՏՐՈՆ

2.3. Օդային ավազան

Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիթորինգ) կողմից:

Էկոմոնիթորինգի կողմից 2016 թվականին Երևան քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործել է պասիվ նմուշառման 47 դիտակետ և յոթ դիտակայան (N1, N2, N7, N8, N16-1, N18 և N19), որից երկուսում՝ N 2 և N18 կատարվել են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ գիտակայանում (N1, N7, N8, N16-1, և N19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2016 թվականի ընթացքում Երևանում ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 9509, պասիվ նմուշառմամբ՝ 4169 փորձանմուշ, ավտոմատ եղանակով կատարվել է 338996 դիտարկում: Ածխածնի մոնօքսիդի տարվա առավելագույն կոնցենտրացիան դիտվել է նոյեմբերի 10-ին ժամը 1945-ին՝ 13.13 մգ/մ³, ծծմբի երկօքսիդինը՝ փետրվարի 2-ին ժամը 15:30-ին՝ 2.93 մգ/մ³ (Կենտրոն համայնք):

Որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ):

2.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է Էկոմոնիթորինգի կողմից, որի տվյալները 2016 թվականի ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 -Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի համար:

Տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:



Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

Ըստ Էկոմոնիթորինգի 2016 թվականի տեղեկանքի Հրագրան գետի ներքին հոսանքներում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս):

2.5. Հողածածկ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած

2.6. Կենսաբազմազանություն

Ներկայացվող տեղանքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Այս տարածքում հանդիպող բուսականության տեսակներն են՝

Մատիտեղ /երկու տեսակ, որոնցից մեկի սերմերի պատիճը ուլունքաշար է, մյուսինը՝ փնջով լոբի/, ուղտափուշ պարսկական, երկտերև, օշինդր, Կապար փշոտ, Իշաովույտ, կովի աովույտ: Այս տարածքում հացազգիներից գերակշռում է կծմախոտը, կա անապատային սեզ:

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է գործող ՁԷԿ-ի տարածքում, Երևանի արդյունաբերական գոտում, որը գուրկ է բնական բուսածածկից:

Կենդանիներից տեղանքում հանդիպում են ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևաորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճոխկ, մորեխ, փայտօջիվ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանձեր:

Թռչուններ՝ կոնչան բադ, եղեգնահավ, լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ:

Այս տարածքում նախատեսվող տարածքում չկան վայրի կենդանիներ:



**3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

3.1. Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը կապված են կենսաօրգանական թափոնների վտանգավորության հետ: Թափոնները կարող են պարունակել տոկսիկ նյութեր, հանդիսանալ վարակի աղբյուր:

Համալիրը գործում է բարձր ջերմաստիճանային ռեժիմում և վթարների դեպքում վտանգ է առաջանում սպասարկող անձնակազմի համար:

Շարժական պայմաններում արտադրամասում օգտագործվում է բենզին և դիզ. վառելիք, որի արտահոսքի դեպքում հնարավոր է հողային ռեսուրսների աղտոտում:


Թափոնների ոչ ճիշտ պահեստավորման կամ վնասազերծման արդյունքում հնարավոր է հողային ռեսուրսների աղտոտում, ինչպես նաև վտանգ է առաջանում սպասարկող անձնակազմի համար:

Թվարկված գործընթացների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով հիմնական գնահատման փուլում կմշակվեն բնապահպանական, սոցիալական միջոցառումներ և բնապահպանական կառավարման պլան: Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2. Մթնոլորտային օդ

Ազդեցությունները նվազեցնելու համար կարևոր են հետևյալ միջոցառումների կատարումը.

- թափոնների վնասազերծման համար նախատեսված է տեղադրել երկաստիճան օդազտիչ (ֆիլտր)
- ապահովել լվացման ռեժիմը և անհրաժեշտ լվացման առարկաները ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդային հատվածները
- պարբերաբար իրականացնել սարքերի պրոֆիլակտիկ ստուգում և տեստավորում
- սարքի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն հատուկ պատրաստված անձնակազմի կողմից,
- շահագործման օդային ավազանի մոնիթորինգ ազտի և ծծմբի օքսիդների ցուցանիշները օդային մոնիթորինգի ռեսուրսները կանխելու նպատակով:



3.3. Ջրային ռեսուրսներ

- թափոնների պահեստավորումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի հետ,

- վնասագերծման սարքի մաքրումն իրականացնել չոր եղանակով, առանց ջրի օգտագործման:

3.4. Հողային ռեսուրսներ

- Բեռնարկերի մեջ տեղադրված թափոնների ժամանակավոր պահման համար արտադրական տարածքում առանձնացնել հատուկ տարածք, որն ունենա բետոնապատ հատակ,

- Ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է՝ պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն.

- Պարբերաբար իրականացնել մերձակա տարածքների ստուգում:

- Արտադրական կեղտաջրերի առաջացումը կանխելու համար արտադրական տարածքի մաքրումը իրականացվելու է չոր եղանակով, առանց ջրի կամ լուծույթների օգտագործման:
- Արտադրամասը սպասարկող բանվորը, ինչպես նաև թափոնների հետ առնչվող անձնակազմը անցնում է համապատասխան դասընթաց և պարբերաբար հրահանգավորվում է:

3.5. Մոնիթորինգի ծրագիր

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակը իրատեսորեն գնահատելու նպատակով նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդի, ջրահոսքերի, հողածածկի և աղմուկի ելակետային պայմանների ուսումնասիրություն:

3.6. Աշխատանքի անվտանգություն

- Աշխատողների վերապատրաստում բարձր ջերմաստիճանային պայմաններում աշխատելու, էլեկտրական և փոխադրական միջոցների անվտանգության, վտանգավոր նյութերի հետ աշխատելու, վտանգավոր նյութերի հատկությունների, ինչպես նաև առաջին օգնություն ցուցաբերելու և կրակի տեխնիկայից օգտվելու և վթարային հակազդման վերաբերյալ



Աշխատողներին տրամադրել անձնական պաշտպանական միջոցներ,

- Աշտարակների, ենթակայանների վրա տեղադրել նախագգուշական նշաններ «Վտանգ հոսանքահարումից»,
- Ապահովել սանիտարական պայմաններ՝ համապատասխան քանակության սանիտարական հարմարություններ տղամարդկանց և կանանց համար առանձին,
- Ապահովել անհրաժեշտ կենցաղային հարմարություններ:

3.7. Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծախսերը կհաշվարկվեն նախագծային փաթեթի կազմում և կներկայացվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ բնապահպանության նախարարություն, (2014): Չորրորդ Ազգային հաղորդագրություն: <http://www.cbd.int/doc/world/am/am-nr-05-en.pdf>
- Ազգային Ատլաս, Երևան, 2007
- Строительная климатология СНРА II-7.01-96
- Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы Обнинск, 1984г.
- Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային

գործողությունների զարգացման գործընթացի մարագնազանության առաջին ազգային զեկույց, 1999

